Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը:
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2023 թվականի գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման, գնման գործընթացի կազմակերպման, պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:
- Իրականացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր իրականացնող լիցենզավորված անձանց կողմից 2022 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն և արդյունքների ամփոփում:
- Լրամշակել Էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման, լիցենզավորված անձանց ներդրումների մասին հաշվետվության

ներկայացման, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ներդրումային գործունեության մոնիթորինգի կարգերը:

- Մշակել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում էներգամատակարարմանն առնչվող հարաբերությունների մասով փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող՝ նոր միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի N295Ն որոշմամբ հաստատված՝ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը:
- Իրականացնել հանրային շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման փոխկապակցման ծառայությունների շուկայի ուսումնասիրություններ:
- Ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի շրջանակներում ռադիոհաճախականության թույլտվությունների տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների մասով:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը մշակել և Ազգային ժողով ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի գործունեության ծրագիրը:
- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- նոր պառողի կամ պառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամյակային ցուցանիշները,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության, ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: